



YERKIR UNION

Union of Non Governmental Organizations for Repatriation and Settlement
Union d'ONG pour le Rapatriement et la Réinsertion
Союз общественных организаций «Еркир» по репатриации и освоению
Հայրենադարձության եւ հիմնավորման հասարակական կազմակերպությունների միություն

Մամլո հաղորդագրություն
30 սեպտեմբերի 2011թ.

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը ողջունում է Ջավախքի հիմնախնդիրների լուծմամբ զբաղվելու ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբի որոշումը

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը ստեղծվել է 2009 թ. դեկտեմբերին: Այն միավորում է ջավախքահայության և վրացահայության խնդիրներով մտահոգ Երևանում և Ջավախքում գործող չորսը հասարակական կազմակերպություններ: Դրանք են՝ «Ջավախք» հայրենակցական միությունը (Շիրակ Թորոսյան), «Վիրք» կուսակցությունը (Դավիթ Ռստակյան), «Ջավախք» ժողովրդական շարժումը (Նորիկ Կարապետյան), Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» ՀԿ միությունը (Սևակ Արծրունի):

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհրդի հիմնական նպատակներն են.

- Հետապնդել ջավախքահայության առջև ծառայած քաղաքական, քաղաքացիական, լեզվական, կրոնական, կրթական, մշակութային եւ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը:
- Միջազգային հանրության ուշադրության կենտրոնում պահել ջավախքահայության եւ վրացահայության իրավունքների պաշտպանության խնդիրը:
- Ակտիվացնել ջավախքահայության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հայության ջանքերը:



Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը ողջունում է Ջավախքի հիմնախնդիրների լուծմամբ զբաղվելու ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբի որոշումը

Ըստ լրատվամիջոցների՝ վերջերս ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Քեն Խաչիկյանը Հայ Դատի վաշինգտոնյան գրասենյակի մամուլի խոսնակ Էլիզաբեթ Չուլջյանի ուղեկցությամբ այցելել է Վրաստան՝ երկրի բարձրաստիճան պաշտոնյաների և հայ համայնքի ներկայացուցիչների հետ քննարկելով Թբիլիսիի և Ջավախքի հայության համայնքային, սոցիալ-տնտեսական, հոգևոր և մշակութային կյանքին վերաբերող հարցեր:

Պրն Խաչիկյանը, ամփոփելով շրջագայության արդյունքները, հայտարարել է, որ Հայ Դատի հանձնախումբը հետամուտ է լինելու Ջավախքի ամրապնդմանն ու անվտանգությանը: Նա նաև նշել է, որ «Ջավախքում մենք կանգնած ենք լուրջ մարտահրավերների առջև, որոնք, աշխատելով միասնաբար, կարող ենք հաղթահարել» (տե՛ս՝ <http://asbarez.com/98280/trust-and-mutual-respect-vital-to-strengthening-armenia-diaspora-relations-says-hachikian>):

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդը ողջունում է ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբի նախագահի այս հայտարարությունը: Մեր կառույցը դեռևս 2010թ. հոկտեմբերի 13-ին կոչ էր արել ԱՄՆ-ում գործող հայկական լոբբիստական կազմակերպություններին ավելի մեծ ուշադրություն դարձնել վրաց իշխանությունների կողմից Ջավախքահայության իրավունքների ոտնահարման խնդրին (տե՛ս՝ http://yerkir.org/index.php?level_id=280&lang=arm), և այսօր մենք ուրախ ենք այդ ուղղությամբ Հայ Դատի հանձնախմբի գործադրվող ջանքերին:

Լիահույս ենք, որ ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը ձեռնամուխ է լինելու այլ գործնական քայլերի՝ ուղղված Ջավախքահայության խնդիրների լուծմանը: Մենք պատրաստ ենք ցույց տալ Հայ Դատի հանձնախմբին, ինչպես նաև ԱՄՆ-ում գործող հայկական այլ լոբբիստական կազմակերպություններին, բոլոր հնարավոր աջակցությունը Թբիլիսիի և Ջավախքի հայության առջև ծառայած հիմնախնդիրների լուծմանը հասնելու գործում: Այդ խնդիրներն են.

- Ջավախքահայության քաղաքական և քաղաքացիական իրավունքների ոտնահարման քաղաքականության վերացումը, Ջավախքահայ քաղաքական ակտիվիստների նկատմամբ քաղաքական հալածանքների դադարեցումը, Վահագն Չախալյանի ազատ արձակումը,
- Ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդլայնումը և ինքնակառավարման մակարդակի բարձրացումը,
- Վրաստանի հայաբնակ շրջաններում (Մամգիսե-Ջավախք-Ծալկա) հայոց լեզվին տարածաշրջանային պաշտոնական լեզվի կարգավիճակի շնորհումը,
- Հայ Առաքելական եկեղեցու գրանցումը, խորհրդային իշխանության տարիներին բռնագրավված եկեղեցական կառույցների վերադարձը,
- Ջավախքահայության արտագաղթի կանխումը և կրթա-մշակութային զարգացման հնարավորությունների ստեղծումը, այդ նպատակով Ախալքալաքում հայ-վրացական համալսարանի հիմնադրումը:

Ջավախքահայության իրավունքների պաշտպանության համակարգող խորհուրդ

*2011թ. սեպտեմբերի 30,
Ախալքալաք-Երևան*